

Կենսաբանություն, I ՓՈԻ-Լ
տևողությունը 60 րոպե
10-րդ դասարան

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Յուրաքանչյուր թեստում առաջարկվում է 4 պատասխան: Ընտրեք միայն մեկը, որը, ըստ Ձեզ, առավել ճիշտ է և ամբողջական:

1. Միջատներով փոշոտվող բույսերի ծաղիկները.

- 1) փոքր են
- 2) բուրմունք չունեն
- 3) առաջացնում են ծաղկաբույլեր
- 4) չունեն վառ գունավորում

2. Ցողունի աճը հաստությամբ տեղի է ունենում.

- 1) աճման կոնի բջիջների հաշվին
- 2) լուբի բջիջների հաշվին
- 3) կամբիումի բջիջների կիսման հաշվին
- 4) միջհանգույցների ակտիվ աճի հաշվին

3. Բակտերիաների նուկլեոիդը իրենից ներկայացնում է

- 1) սպիտակուցներ - հիստոններ
- 2) նուկլեինաթթվի մոնոմեր
- 3) ՌՆԹ –ի մոլեկուլ
- 4) ԴՆԹ–ի մոլեկուլ

4. Մարդը վարակվում է լյարդի ծծանով երբ.

- 1) կուլ է տալիս մակաբույծի ձվերը
- 2) օգտագործում է ֆինաներով վարակված տավարի միս
- 3) շփում է ունենում հիվանդի հետ
- 4) ջուր է խմում բնական ջրավազաններից

5. Նվազ կայուն է.

- 1) բնածին իմունիտետը
- 2) Արհեստական ակտիվ իմունիտետը
- 3) Բնական ձեռքբերովի ակտիվ իմունիտետը
- 4) Արհեստական պասիվ իմունիտետը

6. Սողունների արտազատման արգասիքն է

- 1) միզանյութը
- 2) ամոնիումի աղերը
- 3) միզաթթուն
- 4) ամոնիակը

7. Ստորև բերված հյուսվածքներից որո՞նք են մկանային հյուսվածքի տարատեսակ.

- 1) հարթ և դիմախաղային
- 2) հարթ և կամայական
- 3) միջաջիգ գոլավոր կմախքային
- 4) դիմախաղային և սրտային

8. Մինապսը.

- 1) նեյրոնի ելուստ է
- 2) հպումն է երկու նեյրոնների միջև
- 3) նյարդային հանգույց է
- 4) հորմոն է

9. Քլորոպլաստների կառուցվածքային բաղադրամասերն են.

- 1) կատարներն ու նիստերը
- 2) ստրոման և մատրիքսը
- 3) ստրոման, նիստերը և թիլակոիդները
- 4) նիստերը և խուղակներ

10. Մետաֆազային քրոմոսոմների տիպերն են.

- 1) ակրոցենտրիկ, սուբմետացենտրիկ, մետացենտրիկ
- 2) ցենտրիոլային, մետացենտրիկ
- 3) ցենտրոսոմային, սուբմետացենտրիկ
- 4) ցենտրոմերային, բազմաքրոմատիդային

11. Սպիտակուցների երրորդային կառուցվածքը պայմանավորված է.

- 1) ջրածնային կապերով
- 2) դիսուլֆիդային և էլեկտրաստատիկ կապերով
- 3) կովալենտային և պեպտիդային կապերով
- 4) ջրածնային և հիդրոֆոբային փոխազդեցություններով

12. Ռիբոսոմի ամինոացիլային տեղամասում տեղի է ունենում

- 1) ի-ՌՆԹ-ի սինթեզ
- 2) էներգիայի անջատում
- 3) ամինաթթվով բեռնված փ-ՌՆԹ-ի ներգրավում և փ-ՌՆԹ-ի անտիկոդոնի ու ի-ՌՆԹ-ի կոդոնի միջև ժամանակավոր կապի հաստատում:
- 4) Պեպտիդային կապի առաջացում երկու հարևան ամինաթթուների միջև

13. Էկտոդերմի ածանցյալներ են.

- 1) Քորդա, նյարդային և մարսողական խողովակները
- 2) Կմախքը և կմախքային մկանները
- 3) Արտազատական և սեռական համակարգերը
- 4) նյարդային համակարգը և զգայարանները

14. Մեյոզում տետրապլոիդ օրգանիզմները առաջացնում են դիպլոիդ գամետներ: Այդ ժամանակ բոլոր չորս հոմոլոգ քրոմոսոմների տարամիտումը պատահական է: Տետրապլոիդ AAaa-ի առաջացրած գամետների հարաբերությունը կլինի.

1. 1AA:1Aa:1aa
2. 1AA:4Aa:1aa
3. 1AA:2Aa:1aa
4. 1AA:1aa

15. X քրոմոսոմի հետ շղթայակցված ռեցեսիվ ժառանգման վերաբերյալ ստորև բերված պնդումներից ո՞րն է սխալ:

- 1) վերաբերում է հիմնականում արուներին,
- 2) արուից արու ժառանգաբար չի փոխանցվում,
- 3) հատկանիշը ի հայտ է գալիս իգական սեռի առանձնյակների մոտ, եթե հայրն ունի այդ հատկանիշը, իսկ մայրը այդ հատկանիշի կրողն է,
- 4) հատկանիշը արտահայտվում է անկախ սեռից, բայց ավելի հաճախ էգերի մոտ, քան արուների:

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Քանի՞ տոկոս է շագանակագույն աչքերով աջիկ երեխայի ծնվելու հավանականությունը, երբ ծնողներից մեկը հոմոզիգոտ շագանակագույն աչքերով աջիկ է, իսկ մյուսը՝ հոմոզիգոտ շագանակագույն աչքերով ձախիկ է: Շագանակագույնը դոմինանտ է կապույտ աչքերի նկատմամբ, իսկ աջիկությունը՝ ձախիկության նկատմամբ:

17. Քանի՞ քրոմոսոմ կլինի մարդու երկրորդ կարգի սպերմատոցիտում:

18. Aa x AA խաչասերման արդյունքում ստացած սերնդի քանի՞ տոկոսն է հոմոզիգոտ:

19. Քանի՞ տարբեր տիպի գամետ կարող է առաջացնել Aabb գենոտիպով տոմատի բույսը:

20. Քանի՞ շղթայակցման խումբ կա կոկոռշենու բջիջներում, եթե այդ բույսի սոմատիկ բջիջների դիպլոիդ հավաքակազմը 16-է: